

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/1-1

ք. Երևան

«15» 04 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Հ. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում:

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանաբար ստորաբաժանման կողմից փորձված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել

Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել

աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուին պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուին Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4): Ընդ որում Կապալառուին հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուին պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 620 000 000 (վեց հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ, որից 103 333 333 (մեկ հարյուր երեք միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.5 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը՝

5.5.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

5.5.2 Կապալառուն կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների, ինչպես նաև՝ ձեռքբերվող նյութերի (սարքերի) վերաբերյալ հիմնավորումներ: Հատկացվող

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

կանխավճարի մարման ժամկետները պետք է համապատասխանեն պայմանագրով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներին:

5.5.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

5.5.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կապալառուի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

5.5.5 Կապալառուի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ կանխավճարի շրջանակներում Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ժամկետների խախտման դեպքում տրամադրված կանխավճարի չմարված մասի հետգանձման իրավունքը:

5.5.6 Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (գրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Հաջորդող տարիների աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի <<բ>> պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝


Վ. Մկրտչյան
(ստորագրություն)



ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՓԲԸ
ի/հ ՀՀ, ք. Տաշիր, Դպրոցականների փ. 13ա, բն.16
գ/հ ք. Երևան, Փափազյան 8
<<Հայրիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500257094970
ՀՎՀՀ 02648403

Տնօրեն՝


Վ. Մկրտչյան
(ստորագրություն)



Կ.Տ.



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

**ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի միջնակարգ դպրոցի
 տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
	1.1 Համաշինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ				
1	III-րդ կարգի գրունտների մշակում խրամուղիներում 0.5մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով, կողից	խմ	1424	596	848,230
2	Շերտից համար պահանջվող գրունտի բարձում ավտոմեքենաների վրա էքսկավատորով	խմ	728	243	176,794
3	Նույնի տեղափոխում 1կմ հեռավորությունից (ժամանակավոր պահուստից)	խմ	728	481	350,252
4	Գրունտի ետլիցք բուլդոզերով	խմ	1972	315	621,212
5	Գրունտի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	1972	457	902,059
6	Գրունտի ետլիցք հիմքերի ծոց ձեռքով, տոփանումով	խմ	180	1,203	216,502
	Ընդամենը հողային աշխատանքներ				3,115,049
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				
7	Խամբարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	214	30,136	6,449,205
8	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	21.5	28,992	623,325
9	Խամբարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B- 7.5 դասի բետոնով	խմ	5.8	42,944	249,074
10	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով	խմ	35.5	43,794	1,554,672
11	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	287.95	58,289	16,784,383
12	Ամրան Փ8A240C	տն	7.121	546,136	3,889,034
13	Ամրան Փ16A500C	տն	5.572	468,116	2,608,486
14	Ամրան Փ18A500C	տն	4.442	468,116	2,079,186
15	Ամրան Փ25A500C	տն	0.115	468,116	53,927
16	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5.1	80,921	412,695
17	Ամրան Փ8A240C	տն	0.510	546,136	278,529
18	Ամրան Փ22A500C	տն	1.742	468,116	815,459
19	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	2,077,315	482,145
20	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	խմ	169.65	72,204	12,249,386
21	Ամրան Փ6, 8A240C	տն	1.452	546,136	793,044
22	Ամրան Փ10A500C	տն	2.599	468,116	1,216,635
23	Ամրան Փ12A500C	տն	8.407	468,116	3,935,409
24	Ամրան Փ16A500C	տն	0.431	468,116	201,571



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
25	Ամրան Φ22A500C	տն	1.325	468,116	620,442
26	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.238	2,077,315	493,362
	Ընդամենը Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				55,789,968
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				
27	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	59.5	78,506	4,671,128
28	Ամրան Φ8A240C	տն	2.341	529,842	1,240,355
29	Ամրան Φ16, Φ18A500C	տն	0.050	454,150	22,844
30	Ամրան Φ22A500C	տն	6.940	454,150	3,151,757
31	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.010	2,015,338	20,960
32	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.5	78,506	39,253
33	Ամրան Φ8A240C	տն	0.023	529,842	12,398
34	Ամրան Φ16, Φ18A500C	տն	0.051	454,150	23,252
35	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	10.20	71,391	728,193
36	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	123.42	68,788	8,489,832
37	Ամրան Φ6, 8A240	տն	3.220	529,842	1,706,329
38	Ամրան Φ8A500C	տն	0.643	454,150	291,882
39	Ամրան Φ12A500C	տն	1.797	454,150	816,181
40	Ամրան Φ16A500C	տն	1.497	454,150	679,636
41	Ամրան Φ18A500C	տն	4.019	454,150	1,825,275
42	Ամրան Φ25A500C	տն	0.092	454,150	41,873
43	Ամրան Φ28A500C	տն	0.744	454,150	337,842
44	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.190	2,015,338	382,914
45	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	23.14	62,602	1,448,616
46	Ամրան Φ6, 8A240	տն	0.534	529,842	283,148
47	Ամրան Φ12A500C	տն	1.357	454,150	616,100
48	Ամրան Φ18A500C	տն	0.149	454,150	67,578
49	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	149.4	26,318	3,931,721
50	Նույնի բետոնացում, B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	95.53	39,846	3,806,534
51	Ամրան Φ6, 8A240C	տն	0.724	529,842	383,749
52	Ամրան Φ10A500C	տն	8.657	454,150	3,931,760
53	Ամրան Φ12A500C	տն	7.041	454,150	3,197,490
54	Ամրան Φ16A500C	տն	1.002	454,150	454,877
55	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.63	65,870	107,369
56	Ամրան Φ6A240	տն	0.051	529,842	27,022
57	Ամրան Φ12A500C	տն	0.221	454,150	100,367
58	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	186.5	74,580	13,909,256
59	Ամրան Φ6,8A240	տն	0.357	529,842	189,048
60	Ամրան Φ12A500C	տն	16.051	454,150	7,289,702
61	Ամրան Φ14A500C	տն	5.701	454,150	2,589,247
62	Ամրան Φ18A500C	տն	0.026	454,150	11,626

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
63	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	6.80	71,391	485,462
64	Ամրան Փ8A240	տն	0.184	529,842	97,279
65	Ամրան Փ18A500C	տն	0.367	454,150	166,764
66	Միաձույլ ե/բ հովհարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՄ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1.7	81,037	137,763
67	Ամրան Փ8A240	տն	0.029	529,842	15,206
68	Ամրան Փ8A500C	տն	0.073	454,150	33,062
69	Ամրան Փ12A500C	տն	0.008	454,150	3,633
70	Ամրան Փ16A500C	տն	0.046	454,150	20,891
71	Ամրան Փ18A500C	տն	0.015	454,150	6,812
72	Բետոնե աստիճանների պատրաստում 0,00 նիշից դեպի +0,45նիշ B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	40,613	93,411
73	ՄՄ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0,45նիշից դեպի +3,3նիշ)	խմ	1.9	81,037	153,971
74	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	40,613	20,307
75	Ամրան Փ8A240	տն	0.055	529,842	28,982
76	Ամրան Փ16A500C	տն	0.274	454,150	124,392
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				68,215,048
	Միջնորմներ				
77	Միջնորմների շարում 100մմ հաստ. սևամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397.58	3,958	1,573,732
78	Միջնորմների շարում 200մմ հաստության սևամեջ բետոնե բլոկներով	խմ	110.8	22,747	2,519,737
79	Ամրան Փ8A500C	տն	2.760	392,534	1,083,230
	Ընդամենը միջնորմներ				5,176,699
	Դռներ և պատուհաններ				
80	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36.31	81,983	2,976,610
81	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1.92	74,044	142,164
82	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1.20	66,104	79,325
83	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17.04	58,753	1,001,148
84	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	39,698	91,464
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25.0	31,758	794,910
86	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1	հատ	9	71,456	643,105
87	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2----Դ-3	հատ	41	60,341	2,473,970
88	Ներքին երկփեղկանի դռներ (массивеклетя)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4----Դ-4*	հատ	4	111,154	444,616
89	Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1.7	66,692	113,404

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
90	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	3.4	1,064	3,617
91	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.3	58,753	308,617
92	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12.6	50,813	640,247
93	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89.3	39,698	3,545,415
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	39,698	2,547,491
95	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	80.1	4,009	320,921
	Ընդամենը դռներ և պատուհաններ				16,127,023
	Հատակներ				
96	Հողի տոփանում խճաքարով	քմ	1480	1,152	1,705,559
97	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	222.0	34,954	7,759,825
98	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8,3կգ/քմ)	տն	12.3	392,073	4,816,219
99	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1644.6	2,710	4,456,319
100	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա	քմ	1447.8	1,645	2,381,896
101	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	540.46	2,202	1,190,120
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1104.1	2,318	2,558,930
103	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	417.12	8,735	3,643,367
104	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16.71	8,735	145,955
105	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	16.71	2,202	36,796
106	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	գծմ	171.8	1,036	177,960
107	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123.34	8,349	1,029,731
108	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գծմ	80.1	997	79,871
109	Վինիլային (հետերոգեն ՊՎԲ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	768.4528	7,332	5,634,308
110	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԲ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	41,133	10,589,144
111	Կավորլիսից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	10,448	1,220,384
112	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	3,555	121,997
	Ընդամենը հատակներ				47,548,382
	Տանիք				
113	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3.681	889,323	3,273,420

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
114	ՆՇ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.181	681,229	123,232
115	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6.616	889,323	5,883,760
116	ՆՇ-7---ՆՇ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.196	681,229	133,366
117	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	16.043	889,323	14,267,407
118	ՆՇ-7---ՆՇ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.137	681,229	774,220
119	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաաներկով	տն	27.853	45,273	1,260,989
120	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182.7	2,217	2,621,514
121	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	30.9	266,824	8,244,849
122	Նույնի երեսում (տակից) ՕՍՈ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1540.1	6,622	10,198,846
123	Գոլորշամեկուսիչ շերտի փոշում	քմ	1540.1	1,600	2,464,537
124	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամքակե սալերով	քմ	1540.1	4,289	6,605,319
125	ՕՍՈ սալերի տեղադրում 10մմ հաստ. (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	1781.1	6,622	11,794,796
126	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մողիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	1781.1	8,894	15,841,363
127	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	30.9	7,083	218,858
128	ՕՍՈ սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	1,827	543,045
129	Ջրհորղանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	136.5	5,089	694,644
130	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	5,041	75,621
131	Ջրիոս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	76.18	6,386	486,461
132	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.707	692,014	489,254
133	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաաներկով	տն	0.707	45,273	32,008
Ընդամենը տանիք					86,027,508
Հարդարման աշխատանքներ					
134	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484.24	2,513	6,242,190
135	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313.02	2,438	763,108
136	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	3,028	30,678
137	V-2, V-4, V-5 Վիտրաժների վերին մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	12.9	4,686	60,452
138	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	891.67	2,588	2,307,234
139	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98.22	2,513	246,799
140	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2516.2	2,108	5,303,106

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
141	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313.02	2,053	642,737
142	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	1316.39	2,133	2,807,569
143	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	43.04	2,061	88,709
